«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

ք.Երևան,Արշակունյաց 5,417 սենյակ 24.102015թ.

Համաձայն ս/թ-ի Հոկտեմբերի 24-ին կայացած «ՍԳԿԿ»ԻԿԿ անդամների ընդհանուր ժողովի օրակարգի 3-րդ կետի քվեարկության հիմքով «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորտ Խորհրդի անդամ է ընտրվել,Կարգապահական հանձնաժողովի անդամ-հանձնաժողովի նախագահ՝ Հովհաննես Եղյանը:

Նույն ժողովի օրակարգի 7-րդ կետով «ՍԳԿԿ»ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անդամ է ընտրվել՝Արմենակ Աղամյանը:

Վերոգրյալի հիմքով ս/թ-ի Հոկտեմբերի 24-ին արտահերթ հրավիրված Կարգապահական Հանձնաժողովի նիստին.

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Տիգրան Հարությունյանը.
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը.
Հանձնաժողովի անդամ՝Անդրանիկ Ելինյանը.
Հանձնաժողովի անդամ՝Աշոտ Խաչատրյանը.
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը.

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1.Կարգապահական Հանձնաժողովի նախագահի ընտրություն:
Հանձնաժողովի անդամների խորհրդակցության ընթացքում կապված ընդհանուր ժողովի օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ կայացված որոշման հետ առաջարկվեց նաև օրակարգի 2-րդ հարց՝
2.Կարգապահական Հանձնաժողովի աշխատանքային կարգի մշակման անհրաժեշտության հարցը:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի անդամ Տիգրան Հարությունյանին,ով առաջարկեց կատարել հանձնաժողովի նախագահի թեկնածուի առաջարկություն:
Հանձնաժողովի անդամ Անդրանիկ Ելինյանը առաջարկեց որպես հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանին:Հանձնաժողովի անդամները միահամուռ համաձայնեցին առաջարկին այլ թեկնածուի առաջարկ չկատարվեց:
Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կաղմ – 5
Դեմ – 0
Ձեռնպահ - 0

ԼՍԵՑԻՆ - Հանձնաժողովի անդամ Տիգրան Հարությունյանին,ով ներկայացրեց որ «ՍԳԿԿ» ԻԿԿ անդամների ընդհանուր ժողովի օրակարգի 5-րդ կետի քվեարկության արդյունքում ընդունված որոշմամբ Կարգապահական Հանձնաժողովի վրա դրվում են այնպիսի պարտակա-նություններ,որոնց իրականացման համար անհրաժեշտ է ունենալ հստակ աշխատանքային կանոնակարգ,որը հնարավորություն կտա Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել օպերատիվ և հստակեցում կմտցնի Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման մեջ:

Հանձնաժողովի մյուս անդամները նույնպես,հարցի քննարկման արդյունքում գտան, աշխատանքային կանոնակարգի անհրաժեշտությունը այս իրավիճակում կա և այն պետք է մշակվի կարճ ժամանակամիջոցում:

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կաղմ – 5
Դեմ – 0
Ձեռնպահ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.Կարգապահական Հանձնաժողովի նախագահ ընտրել՝Հանձնաժողովի անդամ՝Տիգրան Հարությունյանին:

2.Երկու շաբաթյա ժամկետում մշակել Հանձնաժողովի աշխատանքային կարգ,հաշվի առնելով «ՍԳԿԿ» ԻԿԿ անդամների ընդհանուր ժողովի որոշման 5-րդ կետի առաջադրած խնդիրները:

3.Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանին համակարգել աշխատանքային կարգի մշակման աշխատանքները և սահմանված ժամկետում այն ավարտվելուց հետո հրավիրել Հանձնաժողովի հերթական նիստ աշխատանքային կարգի քննարկման համար:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Ա. Ելինյան

Հանձնաժողովի անդամ՝Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝Ա. Ադամյան